

է զի յիշեալն յիւրմէ, եւ գուցէ իւր իսկ կատարեալ թագադրութիւնն՝ եղեւ 'ի միջոցի փերբուար-յուլիս ամսոց 1198 ամին, (զի ՌԽԷ թուական Հայոց սկսանի յ'31 յանուարի այնր փրկչական տարւոյ). իսկ մեծագոյն հանդէսն յետ մահուան Սրբոյն, որ դարձեալ 'ի նմին ՌԽԷ թուականի, այլ 'ի վերջն կոյս կատարեցաւ, յաւուր Յայտնութեան Տեառն, այն է 'ի 6 յանուարի 1199 ամի: Եւ եթէ ոք բացայայտ համարելով զբան Լամբրունեցւոյն՝ վասն թագելոյն նաեւ յարեւմտեան ինքնակալէն, երկմտիցի ընդ ժամանակն, մարթի պատասխանել, թէ ոչ միայն վաղ իսկ ընկալաւ Լեւոն զխոստումն թագին, այլ թերեւս եւ զայլ նշանակսն ինչ. քանզի եւ Ամաւրեայ՝ ընծայելոյն 'ի թագաւորութիւն Կիպրոսի՝ որ 'ի նմին ժամանակի խնդրեաց թագ (1195-6), կայսրն՝ առաքեաց նախ գաւազան արքունի, եւ խոստացաւ ապա ինքնին թագել զնա. բայց ըմբռնեալ յախտէ հիւանդութեան՝ զերկոցուն եւս թագս յանձնեաց 'ի քարտուղար իւր: Անկ է յիշել եւ զայս, զի խտիր մեծ կայ ընդ երկոսին խնդրողս եւ ընդունողս թագի. Ամաւրի՝ 'ի կայսերէ միայն խնդրէր եւ խոստանայր նմա շուք դնել. Լեւոն՝ միանգամայն 'ի կայսերէ եւ 'ի Քահանայապետէ Հռովմայ. զմին՝ իբրու տիրաբար պարգեւիչ համարելով, զմիւսն՝ բարեխօս. միոյն պատուադրութիւն, միւսոյն զորդեգրութիւն ընծայելով⁷³:

⁷³ Կարելոր թուեցաւ իրաւագիտաց 'ի խնդիրս յայս թագախնդրութեան եւ թագընկալութեան Լեւոնի՝ գործառնութիւն Ս. Պապին. պատմիչք մեր, որպէս Կիրակոս, ասէն ոչ լոկ կայսեր՝ այլ եւ Պապին առաքեալ նմա թագ. կամ որպէս Գրիգոր Ապիրատ գրէր առ Իննովկենտիոս, թէ արքեպիսկոպոսն Մոզունտիոյ եբեր Լեւոնի թագ 'ի դիմաց Աստուծոյ եւ գերամբարձ եկեղեցւոյն Հռովմայ եւ մեծի ինքնակալին Հռովմայեցւոց. զայս օրինակ մարթ էր Պապին թագ առաքել, այլ ոչ հեղինակօրէն տուչութեամբ՝ որպէս զպալիումն՝ առ կաթողիկոս եւ առ արքեպիսկոպոսունս մեր: Այս խնդիր բացայայտի վերնագրովք թղթոց Լեւոնի առ նոյն Քահանայապետ. յորոց 'ի միումն (1210, ապրիլ), քանզի գրեալ է 'ի լատինն, «Առ Իննովկենտ՝ շնորհօքն Աստուծոյ Ս. քահանայապետ ընդհանրական *եկեղեցւոյ*, Լեւոն *նորին* եւ հռովմական կայսեր շնորհօք՝ Թագաւոր Հայոց», (Innocentio, Dei *gratia*, summo sancto et universali Ecclesie Pontifici, Leo, per *eamdem* et Romani imperij gratiam Rex Armeniorum), համարեցան ոմանք թէ *նորին* ակնարկիցէ *յեկեղեցին*. սակայն 'ի գլխաւորն եւ յառաջինն թղթոց շնորհակալութեան վասն թագաւորութեանն՝ չիք բառն եկեղեցւոյ, իսկ այլն ամենայն հաւասար է աստ գրեցելոցս. յորմէ յայտ լինի՝ զի *նորին* կամ *նովիւք* (per *eamdem*) ակնարկէ 'ի նախակարգեալ *շնորհօքն Աստուծոյ* (Dei *gratia*). զոր աներկբայ եւս յայտնէ միւս թուղթ Լեւոնի (յօգոստոսի, 1210) առ նոյն Քահանայապետ, պարզապէս գրելով, «Լեւոն որդի բարեյիշատակ Պարոն Ստեփանէի, *Աստուծոյ* եւ *Հռովմական կայսերութեան* շնորհօք թագաւոր Հայոց». Leo, filius Domini Stephani bone memorie, *Dei et Romani imperij gratia*, Rex Armenie. Այսպէս եւ 'ի պարգեւագրին զոր տուեալ է առ Տեւոննեան ասպետս (1212), եւ յայլսն եւս թուղթս ինչ: